ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխարհագրություն

(առարկա)

ԹԵՄԱ՝ Ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառումը աշխարհագրության դասաժամերին

Կազմեց՝ Նարինե Աղասյան Սերգեյի

(անուն, ազգանուն, հայրանուն)

<<Գեղանուշի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Մարտիրոսյան Մերի

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն ..... **Ошибка! Закладка не определена.**

Աշխարհագրության ուսուցման մեթոդներ 5

Աշխարհագրության դասավանդման մեթոդները.....8

Աշխարհագրության ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառումը 10

Հավելված.....14

Եզրակացություն ..... **Ошибка! Закладка не определена.**

Գրականության ցանկ 20

Ներածություն

<<Կրթությունը պետք է լինի ճշմարիտ, ամբողջական, հստակ և մնայուն>>:

Կամենսկի[1]

Կրթության ժամանակակից համակարգը դասավանդողից և կրթություն իրականացնող մյուս օղակներից պահանջում է ծրագրերի անընդհատ նորացում, կատարելագործում, քանի որ ժամանակի հետ փոխվում են հասարակությունը, կրթության նպատակաուղղվածությունը: Ուսուցման հիմնախնդիրները միշտ էլ առաջնային և կարևոր են եղել հասարակության համար, ուստի զգալի պահանջներ են ներկայացվում նրանց, ովքեր դրանք պետք է լուծեն վարպետությամբ: Մանկավարժությունը պետք է կարողանա ճիշտ համադրել մեթոդներն ու հնարները:

Հետազոտական աշխատանքում ներկայացվում են ուսուցման արդյունավետության բարձրացման մոտեցումներն ու մեթոդները:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում մեծ դեր ունեն ժամանակակից ուսուցման ձևերը, որոնք նպաստում են սովորողների մտավոր ունակությունների ակտիվացմանն ու զարգացմանը: Արդի պայմաններում ժամանակակից սերունդ կրթելու համար մեթոդական նորությունները պարտադիր են:

Այն նպաստում է սովորողի ինքնուրույն մտածելու , ստեղծագործելու զարգացմանը: Սովորողների կարողությունների և հմտությունների ձևավորման համար կարևոր նշանակություն ունի դասավանդման ընթացքում մեթոդների ճիշտ ընտրությունը: Աշակերտն այսօր կարևորում է ուսուցչի կողմից իրեն գիտելիք հաղորդելու ձևը:

Աշխարհագրության դասաժամերին պետք է կիրառվեն այնպիսի մեթոդներ, որ սովորողներն իրենք ցանկություն ու հետաքրքրություն հանդես բերեն դասի ուսումնասիրության հարցում: Շատ կարևոր է, որ սովորողն ըմբռնի, որ աշխարհագրությունը ոչ թե դժվար սահմանումների մի համակարգ է, այլ՝ կյանքի, աշխարհի բնութագիրն է: Երբ սովորողը զգա և գիտակցի թեմայի արդիականությունը ու նրա կապը աշխարհի հետ, ուսուցումն էլ ավելի արդյունավետ կկազմակերպվի:

[1] Tabrik.ru https://tabrik.ru

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը[2]:

Հետազոտական աշխատանքի նպատակն է վերլուծել աշխարհագրության արդյունավետ հնարների կիրառման առանձնահատկությունները: Ուսուցման արդյունավետ հնարները նպաստում են ժամանակի տնտեսմանը, դասավանդողի և սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտմանը, տեսակետը արտահայտելու և հիմնավորելու հնարավորությունը:

[2] Ուսուցման արդյունավետ հնարներ (Ս. Խաչատրյան, Հր. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020)

Աշխարհագրության ուսուցման մեթոդներ

Մեթոդ(հունարեն - նպատակին հասնելու ուղի) ուսուցչի և սովորողների հաջորդական փոխկապակցված գործողությունների համակարգ, որն ապահովում է ուսումնական նյութի յուրացմանը[3]:

Մեթոդը բազմաչափ հասկացություն է: Ուսուցման յուրաքանչյուր մեթոդ ունի բազմաթիվ հատկություններ և առանձնահատկություններ, ինչի արդյունքում կամ դրանց տարբերակման բավականին քիչ սկզբունքներ: Այդ իսկ պատճառով մանկավարժական գիտության մեջ չկա դասավանդման մեթոդների բացահայտման միասնական մոտեցում:

Ուսուվման լավ արդյունքների կարելի է հասնել միայն մի շարք լրացուցիչ մեթոդների կիրառմամբ: Ուսուցման մեթոդների արդյունավետությունը ցանկացած մանկավարժական կախված է ուսուցման կոնկրետ նպատակներից և խնդիրներից:

Մանկավարժական կոմպետենտության կարևորագույն բաղադրիչը ուսուցչի՝ դասավանդման մեթոդները ճիշտ ընտրելու և կիրառելու կարողությունն է:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության նպատակներին իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չեն կարող: Պայմանականորեն ուսուցման մեթոդներնայսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարում բացատրական զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական ակտիվ մասնակցությունը: Այսպիսով՝ ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր

[3] <<Դասավանդման մեթոդներ և տեխնիկա>>
Srcaltufevo.ru
https://srcaltufevo.ru

մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու համադրելու հմտությունը:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և իտերակտիվ մեթոդներ, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են սովորողներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր և մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բայց մեթոդները և հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Մեթոդն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Աշակերտները հայտնվում են տարբեր ուսումնական իրավիճակներում, հանդիպում են դժվարությունների, հաղթահարում դրանք ինչպես ինտուիտիվ, այնպես էլ նոր գիտելիքների միջոցով, որոնք պետք է ինքնուրույն ձեռք բերվեն անհատական նպատակին հասնելու համար, որը կազդի ամբողջ խմբի աշխատանքի արդյունքի վրա: Անհնար է հաշվի չառնել այն փաստը, որ շատ հաճախ աշակերտները կորցնում են սովորելու մոտիվացիան և նոր գիտելիքներ ձեռք բերելու հետաքրքրությունը: Հենց սա է թույլ տալիս երեխաներին ձևավորել միմյանց հետ համագործակցելու խնդիրների լուծման ընդհանուր ռազմավարություն մշակելու, պարտականությունները բաշխելու և փոխադարձ օգնություն ցուցաբերելու կարողություն:

Աշակերտների համար գիտելիքի աղբյուր կարող են լինել ուսուցչի կենդանի խոսքը, դասագիրքը, աշխարհագրական քարեզը, լրացուցիչ գրականությունը, տեսողական նյութերը, թվային նյութերը, գործնական աշխատանքը, դիտարկումները, փորձերը:

Մանկավարժական ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբի[4]

1. բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)

[4] hy.m.wikipedia.org
https://hy.m.wikipedia.org

2. վերարտադրողական, բացատրական - ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն)
3. ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության):

Աշխարհագրության դասավանդման հիմնական մեթոդները

Ուսուցման մեթոդները - դրանք փոխկապակցված գործունեության եղանակներ են ուսուցիչների և աշակերտների, որոնք ուղղված են սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման նպատակներին:

Նաև ընդունված է առանձնացնել ուսումնասիրության հետևյալ մեթոդները՝ բացատրական-պատկերավոր, վերարտադրողական մեթոդ, խնդրի ներկայացում, մասնակի որոնում, հետազոտություն:

Բացատրական-պատկերավոր մեթոդի նպատակը կազմակերպել դպրոցական գիտելիքների և տվյալների ձուլումը պատրաստի եղանակով: Ուսուցիչը ներկայացնում է ուսումնական նյութը՝ օգտագործելով աշխարհագրական քարտեզներ, տարբեր տեսողական միջոցներ: Շեշտը դրվում է հիմնական նյութի վրա, բացառելով երկրորդական տեղեկություններով ծանրաբեռնվածությունը: Աշակերտի առաջադրանքն է ընկալել նոր տեղեկատվությունը, հիշել և վերարտադրել այն: Ամեն դեպքում, աշակերտները ստանում են գիտելիքներ պատրաստի տեսքով, առաջադրանքները լուրջ մտավոր դժվարություններ չեն առաջացնում:

Վերարտադրողական մեթոդ դրա նպատակն է սովորեցնել աշակերտին կիրառել գիտելիքներ և հմտություններ ծանոթ իրավիճակում ըստ հայտնի օրինաչափության: Ուսուցիչը կազմակերպում է աշակերտների ինքնուրույն աշխատանքը, նրանց տալիս է ստանդարտ առաջադրանքներ և ծանոթացնում դրանց կատարման եղանակի հետ: Աշակերտները կատարում են առաջադրանքը ամբողջ դասարանով ուսուցչի ղեկավարությամբ: Հետո տրվում է նմանատիպ առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար: Նման աշխատանքի հիմնական տեսակն է նկարագրություններ աշխարհագրական քարտեզների վրա: Տրվում են նաև առաջադրանքներ՝բացահայտելու պատճառահետևանքային հարաբերությունները, համեմատություններ անելու համար: Ամեն դեպքում, աշակերտին հայտնի է առաջադրանքների կատարման եղանակը, չի փնտրում նոր միջոց: Հետևաբար, նրանց գործունեությունը վերարտադրողական է, այսինքն. նրանց հիմնավորման տրամաբանությունը որոշվում է ստանդարտ պլանով, հրահանգներով:

Խնդրի ներկայացման մեթոդ դրա նպատակն է ցույց տալ աշակերտներին օրինակելի լուծումը խնդիրների, նրանց համար բացահայտելու դեպի ճշմարտություն շարժվելու բարդ ուղին: Ուսուցիչը ձևակերպում է խնդիրը, և համոզիչ կերպով լուծում է այն: Աշակերտների գործունեությունն է, որ նրանք պետք է ընկալեն, ըմբռնեն նյութը, հետևեն ապացույցի տրամաբանությանը, սովորեն խնդիրների լուծման քայլերը:

Մասնակի որոնման մեթոդ դրա նպատակն է աստիճանաբար ծանոթացնել աշակերտներին ստեղծագործական գործունեության հետ: Սա ձեռք է բերվում խնդիրների լուծման միջոցով: Այս մեթոդը կոչվում է նաև ստեղծագործական մեթոդ: Մասնակի որոնման մեթոդով ուսուցիչը դնում է հիմնական խնդիրը և այն բաժանում մի քանի ենթահարցերի, ենթահարցերի պատասխանները հանգեցնում են հիմնական հարցի պատասխանին: Միևնույն ժամանակ աշակերտները որոնողական աշխատանքներ են իրականացնում, բայց ոչ ամբողջովին ինքնուրույն, քանի որ նրանց յուրաքանչյուր քայլ ուղղորդվում է ուսուցչի կողմից ենթահարցերի միջոցով:

Հետազոտության մեթոդ դրա նպատակն է ծանոթացնել աշակերտին ինքնուրույն ստեղծագործական գործունեության: Եթե նախորդ մեթոդի դեպքում ուսուցչի օգնությամբ են փնտրում հարցի պատասխանը, ապա այս մեթոդի դեպքում ինքնուրույն են կատարում առաջադրանքները: Աշակերտները հավաքում են փաստացի նյութ, մշակում, համակարգում այն, վերլուծում, եզրակացություններ անում, հիմնավորում դրանք: Նման առաջադրանքների իրականացումը հնարավորություն է տալիս ստանալ նոր գիտելիքներ:

Աշխարհագրության ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառումը

Աշխարհագրության դասերին դասապրոցեսը կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝ խթանում, իմաստի ընկալում, կշռադատում:

Դասապրոցեսի անցկացման փուլերը

Խթանման փուլի մեթոդներից անրադառնանք մտագրոհի և պրիզմայի մեթոդներին: Մտագրոհ մեթոդ՝ դասի խթանման պարզագույն և շատ արդյունավետ մեթոդներից, որի գլխավոր գործառույթը մտքերի գեներեցիան է: Աշակերտների առջև կոնկրետ խնդիր է դրվում նրանցից յուրաքանչյուրը արտահայտում է սեփական տեսակետները առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա: Նաև կոչվում է մտքերի տարափ մեթոդ: Այս մեթոդը կիրառելիս սխալ մտքեր ու գաղափարներ չկան, բոլոր արտահայտված մտքերն ու գաղափարներն ընդունելի են: Մեթոդը նպաստում է նոր գաղափարներ ի հայտ գալուն:

Պրիզմա մեթոդ

Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերահսկումն ու արձանագրումն է: Տրվում է մեկնաբառը՝ այն հիմնական հասկացությունը, որը ենթակա է ուսումնասիրության: Հաջորդ վանդակներում լրացվում են մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջի երկու պատահական բառերը: Եվ այսպես մինչև վերջ: Պրիզման եզրափակվում է վերջնաբառով: Ամփոփիչ քայլը մեկնաբառի և վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է, որն իր արտացոլումն պետք է գտնի մեկ մտքի մեջ:

Կշռադատման փուլի մեթոդներից են՝ քառաբաժանը, գաղափարների քարտեզագրումը:

Գաղափարների քարտեզագրումը

Մեթոդը մտքերի և դրանց փոխհարաբերությունների տարածական պատկերումն է: Օգնում է սովորողներին շատ բաներ տարբեր տեսանկյուններից հասկանալու, մտածողության տարբեր ձևեր օգտագործելու: Հասկացությունների քարտեզ կազմելու

համար անհրաժեշտ է գլխավոր, առանցքային միտքը նշել թղթի մեջտեղում՝ ուղղանկյան ձևով: Կապակցված գաղափարները պետք է գրել կենտրոնական մտքից ճառագայթող ճյուղերին, բոլոր արտահայտությունները գծերով միացնել կենտրոնին կամ ճյուղերին՝ ըստ դրանց միմյանցից կախված լինելու հանգամանքի: Գաղափարների քարտեզագրումն իր կառուցվածքով զարկ է տալիս գաղափարների ներդաշնակեցմանն ու նոր գաղափարների կերտմանը: Իմաստի ընկալման մեթոդներից են՝ խճանկարը, T-աձև, M-աձև աղյուսակները:

T-աձև աղյուսակի մեթոդ

Այս մեթոդը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները՝ դրական և բացասական կողմերը: Այս մեթոդը հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխաններ կամ հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար:

Դրական կողմեր Բացասական կողմեր

M-աձև աղյուսակի մեթոդ

Այս մեթոդը T-աձև աղյուսակի ավելի ճկուն տարբերակ է, որը միևնույն հասկացության վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք արտահայտելու հարմար միջոց է: Սա նույնպես կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Աղյուսակը կազմված է երեք մասից, որտեղ միևնույն հասկացության վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումն է գրանցվում, նաև բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երեք տարբեր պատասխանների կամ համադրություն/հակադրություն/չեզոք վերաբերմունք արտահայտող արձագանքների գրառման համար:

Դրական կողմեր Չեզոք կողմեր Բացասական կողմեր

Խճանկար մեթոդ

«Խճանկար» անվանումը բնութագրում է մեթոդը: Աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի և սովորեցնողի դերերում: Խճանկարի փուլերն են՝

Առաջին փուլում աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Յուրաքանչյուր անդամ դառնում է որև ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են թեմաները, հավաքում տեղեկատվություն: Երկրորդ փուլում աշակերտները համեմատում և հարստացնում են իրենց նյութերը: Մյուս փուլում յուրաքանչյուր փորձագետ խմբի մնացած անդամներին սովորեցնում է իր ենթաթեման: Ավարտական աշխատանք փուլում աշակերտները ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից:

Ամփոփում փուլում արդյուններն ամփոփում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների: Խճանկար մեթոդի տարատեսակներից է շրջագայություն պատկերասրահում: Այս մեթոդը համարվում է աշխարհագրության դասավանդման առավել արդյունավետ մեթոդներից մեկը: Շրջագայություն պատկերասրահում մեթոդի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Ներկայացնենք ընթացքը. ուսուցիչն առաջադրանքը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբի տալիս դրանցից մեկը ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից, այդ դեպքում նյութի նույն մասն կուսումնասիրի երկու խումբ: Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են տրված մասի վրա և ստեղծում նկար, դիագրամ, աղյուսակ և այլն: Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին ստեղծելով պատկերասրահ: Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը, կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց համարների: Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ: Տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և

մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին: Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկվում այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը: Նշենք նաև կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերն կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրները: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս աշխատանքների հետ աշակերտները հետադարձ կապ են ապահովում: Բարձր դասարաններում նպատակահարմար է խմբերին առաջադրել թեմայի տարբեր մասեր:

Հետազոտությունը իրականացվել է Գեղանուշի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանում, որտեղ սովորում են 6 աշակերտ՝ 3 աղջիկ, 3 տղա:

Որպես հետազոտության թեմա՝ ընտրվել է ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառումը աշխարհագրության դասաժամին:

Հետազոտության նպատակն է պարզել նոր մեթոդների կիրառման արդյունավետությունը: Դասը վարել եմ նոր մեթոդներով: Կիրառվել է <<մտագրոհ>>, <<ԳՈՒՍ>>, <<պրիզմա>>, <<Տ-աձև աղյուսակ>>, <<գաղափարների քարտեզագրում>> մեթոդները:

Դասի թեման է Արևելյան Եվրոպա. կազմը, աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները:

Նախօրոք գրատախտակին գրվել է դասի ուսումնասիրության համար առանձնացված կետերը հետևյալ սխեմայով.



Գծապատկեր 1.

Դասն անց եմ կացրել ԽԻԿ համակարգով: Քննարկվել է նախորդ դասին հանձնարարված տնային առաջադրանքը: Խթանման փուլում իրականացվել է սովորողների ակտիվացում <<մտագրոհ>> մեթոդով՝ թեմայի մասին ունեցած տեղեկատվությունը վերհիշելու միջոցով: Քարտեզի վրա ցույց են տրվել Եվրոպայի տարածաշրջանները, այնուհետև <<պրիզմա>> մեթոդով քննարկվեցին և գնահատվեցին Եվրոպայի ավանդը մարդկային հասարակության զարգացման գործում, արդյունքում ստացանք, թե ինչպես է իրագործվել միասնական Եվրոպայի ստեղծման գաղափարը:



Գծապատկեր 2.

Դասի հաջորդ փուլը իմաստի ընկալումն է : Անցա նոր նյութի հաղորդմանը: Դասի թեման հայտնելուց հետո դիմեցի սովորողներին հարցադրումներին. ի՞նչ գիտեք այս թեմայի մասին, նրանք լրացրեցին նախօրոք բաժանված ԳՈՒՍ մեթոդի Մ-աձև աղյուսակի ձախ սյունակի <<գիտեմ>> հատվածը: Այնուհետև ընդհանուր ներկայացրեցի Արևելյան Եվրոպա տարածաշրջանի կազմը, ձևավորման գործընթացը, աշխարհի քարտեզի վրա ցույց տվեցի Արևելյան Եվրոպայի երկրները: Շարունակեցին ԳՈՒՍ-ի աղյուսակի հաջորդ սյունակը: Ըստ <<խճանկար>> մեթոդի դասարանը բաժանեցի 3 խմբի: Նախ ընթերցեցին նյութը, խմբերին բաժանվեց թերթիկներ, որոնց վրա գրված էին, թե տվյալ խումբը հարցի որ կողմը պետք է ներկայացնի: Խմբից ընտրվեց փորձագետ, որը մյուս խմբերի անդամներին սովորեցրեց իր ենթաթեման: Ավարտելուց հետո ամփոփվեց արդյունքները: Յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր աշխատանքը:

Օրինակ I խումբը T-աձև աղյուսակով ներկայացրեց Արևելյան Եվրոպայի աշխարհագրական դիրքը և գլխավոր առանձնահատկությունները, II խումբը՝ աշխատանք ուրվագծային քարտեզի հետ, III խումբը՝ բնական պայմաններն ու ռեսուրսները՝ գաղափարների քարտեզագրում մեթոդով: Յուրաքանչյուր փորձագետ խմբի մյուս անդամներին փորձել է սովորեցնել իր ենթաթեման: Ամփոփելուց հետո համագործակցելով կարողացել են քննարկել և վերլուծել նոր նյութը:

Մեթոդի օգտակարությունը պարզվել է կշռադատման փուլում: Այն ակնհայտ է դարձել, երբ դասի սկզբում կիրառվել և ավարտին են հասցրել ԳՈՒՍ-ի աղյուսակը.

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Ավարտելուց հետո ամփոփվեց արդյունքները: Պարզվել է, որ սովորողները լավ են յուրացվել նոր նյութը: Կատարվել է անդրադարձ, միավորային գնահատում և հանձնարարվել է տնային առաջադրանք, գրել հետաքրքիր փաստեր Արևելյան Եվրոպայի մասին:

Գնահատականներ.

Բաղալյան Անահիտ-8

Էլչյան Նանիկ-7

Հակոբյան Մանե-5

Համբարձումյան Ալբերտ-7

Հարությունյան Էմիլ-8

Մարգարյան Արա-4

Հավելված

Օրվա դասի պլան

Դասարան	8-րդ
Ամիս, ամսաթիվ	11.09.2023թ.
Առարկա	Աշխարհագրություն
Ուսուցիչ	Ն. Աղասյան
Դասի թեմա	Արևելյան Եվրոպա
Դասի նպատակը	Ծանոթանալ տարածաշրջանի աշխարհագրական դիրք, բնական պայմանների ու ռեսուրսների առանձնահատկություններին
Վերջնարդյունքները	Սովորողը իմանա Եվրոպայի տարածաշրջանների ու պետությունների աշխարհագրական առանձնահատկությունները, գնահատի նրանց տեղն ու դերը աշխարհում
Հիմնական հասկացությունները	ՔԱԴ, ՏԱԴ, ռեկրեցիոն ռեսուրս, գործազրկություն, անցումային տնտեսություն <<եվրոպակենտրոն>>
Խաչվող հասկացություններ	Մասշտաբ, կազմ, կայունություն և փոփոխություն, պատճառ և հետևանք
Միջառարկայական կապ	Հայոց լեզու-վերլուծել, ընկալել տեքստը, կազմել գրագետ բանավոր և գրավոր խոսք Համաշխարհային պատմություն-կարողանալ պետություններում տեղի ունեցող փոփոխությունները կապել կարևոր իրադարձության հետ
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Քարտեզ, դասագիրք, նկարներ, ուրվագծային քարտեզ
Կիրառվող մեթոդներ	Մտագրոհ, պրիզմա, ԳՈՒՍ, Տ-աձև աղյուսակ,

	գաղափարների քարտեզագրում, հարց ու պատասխան, ԽԻԿ	
Կապը ՀՊՉ-ի հետ	Հ1, Հ2, Հ8, Հ27, Հ29, Հ30, Հ32	
Դասի տիպը	Համակցված	
Դասի տևողությունը	45 րոպե	
Դասի ընթացքը		
Դասի փուլ	Հարց, ժամաքանակ	Մեթոդներ
Խթանում Անդրադարձ (10րոպե)	Կազմակերպչական մաս Տնային աստուգում Հետաքրքրություն առաջացնել սովորողների մեջ/խթանիչ հարցեր/ Ինչպե՞ս է սկսվել միասնական Եվրոպայի ստեղծման գաղափարի իրագործումը	Հարց ու պատասխան, մտագրոհ, պրիզմա
Իմաստի ընկալում Նոր նյութի հաղորդում (25 րոպե)	Ներկայացնել դասանյութի հիմնական ուղղությունները: Քարտեզին ցույց տալ Եվրոպայի տարածաշրջանները, Արևելյան Եվրոպայի պետությունները: Դասարանը բաժանել խմբերի, յուրաքանչյուրին հանձնարարել իրենց առաջադրված խնդիրները, ընթերցել տեքստը ր ներկայացնել առանցքային հասկացությունները՝	Խմբային աշխատանք, ԳՈՒՍ, խճանկար, Տ-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզագրում

	լրացնել և ներկայացնել հանձնարարված առաջադրանքները	
Կշռադատում (անդրադարձ 10րոպե)	Ամփոփել թեման, կատարել գնահատում, հանձնարարել տնային առաջադրանք. պատմել դասը, գրել հետաքրքիր փաստեր Արևելյան Եվրոպայի երկրների մասին	ԳՈՒՍ, տարբերակված առաջադրանքներ

Եզրակացություն

Աշխատության խնդիրն է հասկանալ աշխարհագրության ուսուցման որ մեթոդն է ավելի արդյունավետ կիրառել այս դասարանում ուսուցման գործընթացը ճիշտ կազմակերպելու համար: Այժմ, նոր չափանիշներին համապատասխան, նախ և առաջ անհրաժեշտ է ուժեղացնել սովորողի մոտ մոտիվացիան՝ սովորելու իրեն շրջապատող աշխարհը, օգտակար տեղեկատվության որոնումը և այն իրական կյանքում կիրառելու հմտությունները:

Այս բոլոր մեթոդները ուսումնասիրելիս ես հանգեցի մի շարք եզրակացությունների: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, կարևոր է մեթոդի ճիտ և նպատակային ընտրությունը:

Յուրաքանչյուր ոչ ավանդական դաս պետք է ստեղծագործական բնույթ ունենա: Ամեն դասի համար մեթոդիկա մշակելիս պետք է հաշվի առնել դասարանի սովորողների առանձնահատկությունները: Անգամ միևնույն դասի ուսուցման համարտարբեր դասարաններում պահանջվում է տարբեր մեթոդների զուգակցում: Կիրառված մեթոդները պահանջում են սովորողների ակտիվ մասնակցություն և ապահովում են դասի ժամանակ նոր նյութի մեծ քանակության ուսուցում:

Ամեն դեպքում, յուրաքանչյուր ուսուցչի նպատակը մեկն է. Չնայած, որ դասավանդումն ու ուսուցումը տարբեր գործընթացներ են, դասավանդմանը պետք է հետևի ուսուցումը, և յուրաքանչյուր սովորողի սովորածը պետք է լինի այնքան հիմնավոր, որ այդ գիտելիքները նրանք մշտապես կարողանան օգտագործել:

Գրականության ցանկ

1. Խաչատրյան Ա., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան 2020
2. Ա. Հովսեփյան, Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան, Աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ, Երևան, Աստղիկ գրատուն, 2013
3. Ա. Հովսեփյան, Ա. Մանասյան, Աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ 9-րդ դասարանի, Երևան, 2014թ.
4. Tabrik.ru https://tabrik.ru
5. Srcaltufevo.ru https://srcaltufevo.ru Դասավանդման մեթոդներ և տեխնիկա
6. Hy.m.wikipedia.org https://hy.m.wikipedia.org